

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐԸ.

Ինչ է նշանակում լինել Քրիստոսում
Կողոսացիների շարք Գլուխ 1 #3

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ/ՀԱՋՈՐԴԻՎ.

Փնտրեք «մարդկային ռասա» տերմինը. և երբևէ փորձե՞լ եք մտածել, թե ինչպես պետք է նույնիսկ հասկանանք այդ տերմինը: Բայց եթե մենք մարդկային ռասա ենք, այդպես չի թվում: Այլ կերպ ասած՝ մենք բոլորս նույնը լինելու դրոշակի տակ հանդես չենք գալիս: Մենք բոլորս կծնվենք, բոլորս կապրենք տարբեր մակարդակներում, տարբեր տևողությամբ, տարբեր վիճակներում, և բոլորս էլ կմահանանք: Այդ ամենը Ադամով: Եվ միությանը, որը մենք ունենք Ադամով, ստանում ենք լիովին անվճար, երբ ծնվում ենք: Դու գոյանում ես Ադամով: Ադամով ձեր միությանը, եթե չխախտվի Քրիստոսով ձեր միությամբ, աշխարհի միությունն է:

♪ ♪ ♪

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

Կողոսացիների գրության մեջ ընդհանուր ամամբ կա 95 խոսք, որոնք կազմում են գիրքը: Եթե ես ամեն խոսքի վրա կանգ առնեի, պատկերացնում եք ինչ կլիներ: Այսպիսով, ես կփորձեմ զգույշ լինել, բայց կան բաներ, որոնց կողքով չեմ ուզում ուղղակի անցնել: Եվ այսօրվա ասելիքս, կտեսնեք, որ այն բաներից է, որ ես կարևոր եմ համարում: Այն մեզ մի փոքր ըմբռնում կտա: Այսպիսով, 1-ին գլխում, «Պողոսը՝ առաքեալը Յիսուս Քրիստոսի՝ Աստծու կամքով, եւ Տիմոթէոս եղբայրը՝

Կողոսիայում եղող սրբերին եւ հաւատացեալ եղբայրներին ի Քրիստոս:

Ճնո՞րհ ձեզ եւ խաղաղութի՞ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից»:

Դրանից առաջ չեմ անցնում: Երբ նայում էի 1-ին և 2-րդ խոսքերին, մի բան կար, որն իսկապես ապշեցրեց ինձ: Եթե կենտրոնանաք «Կողոսիայում եղող սրբերին եւ հաւատացեալ եղբայրներին ի Քրիստոս» հատվածի վրա, որովհետև ես իրոք ուզում եմ, որ սա պարզապես պատմական տեսարան չլինի, որտեղ հասկանում ենք պատմությունը, այլև ցանկանում եմ, որ կարողանանք այն կիրառել մեր օրերում: Գիտե՞ք՝ ես միշտ մտածում եմ, որ հրաշալի է պատմությունն ու իր համատեքստը սովորելը, բայց նաև հրաշալի է դրանք կիրառելը, և ես միշտ փորձում եմ անել դա: Հիմա ուզում եմ նայեք «Կողոսիայում եղող սրբերին եւ հաւատացեալ եղբայրներին ի Քրիստոս» հատվածին: Եվ ես ուզում եմ, որ մի փոքր փոխարինում անենք այստեղ, որպեսզի իրավիճակն ավելի իրական դառնա: Հավատացյալներին, «սրբերին եւ հաւատացեալ եղբայրներին», և մենք դա օգտագործում ենք որպես ընդհանուր տերմին՝ տղամարդկանց և կանանց դասակարգելու համար, հավատացյալներին, «... սրբերին եւ հաւատացեալ եղբայրներին ի Քրիստոս» և պարզապես «Կողոսիայում» եղող հատվածի փոխարեն ուզում եմ դրան նայեք այսպես. «Գլենդելում եղող սրբերին եւ հաւատացեալ

եղբայրներին ի Քրիստոս» կամ Օրովիլում, կամ Բերկլիում, կամ որտեղ որ այժմ գտնվում եք, տանը: Ես ուզում եմ, որ դուք պատկերացնեք ու հասկանաք, որ այս առաքելական ողջույնը իր համատեքստում, որին ես անդրադարձա անցյալ շաբաթ, պետք է նաև հասկանալ որպես մի բան, որը չեմ կարծում, որ նախատեսված էր որպես աստվածաբանական նախադրյալ, այլ մենք միշտ երկու հարթությունների մեջ ենք: Մենք Քրիստոսի մեջ ենք և այնտեղ ենք, որտեղ այդ պահին գտնվում ենք: Այս մարդկանց դեպքում, նրանք Քրիստոսի մեջ էին Կողոսիայում: Մեր դեպքում, մենք Քրիստոսի մեջ ենք Հավատքի Կենտրոնում, կամ Գլենդելում: Այսպիսով, ես իսկապես շատ կցանկանայի, որ նույնիսկ եթե տատանվեք իմ ասածի վերաբերյալ, հղենք նամակը Կողոսիայում գտնվող հավատացյալներին, այնուհետև այն մի տեսակ հետ բերենք այստեղ՝ Գլենդելի հավատացյալներին: Ես ուզում եմ, որպեսզի փորձենք ու տեսնենք, որ կարող եք Աստվածաշունչը կարդալ առնվազն երկու հարթության մեջ, ինչպես արդեն ասացի, պատմական իրավիճակում և կիրառական տեսանկյունից, որը պետք է լինի: Այլապես դուք պարզապես կարդում եք որևէ բան, որը երբեք ձեզ վրա չեք վերցնում: Այսպիսով, այստեղ իմ ուշադրությունը գրավեց այն, և սա շատ աննշան է թվում, բայց իմ ուշադրությունը գրավեց մի բան, որը հնարավոր է դժվար լինի հասկանալ, թե ինչու եմ ասում, որ այն բավականին կիրառելի է այսօր: Բայց սա, ինչն օգտագործելու եմ որպես, չեմ սիրում «բանաձև» բառը, քանի որ թվում է, թե այն կանխամտածված և նախատեսված բան է: Բայց Պողոսը շատ է գրում՝ ես այն անվանում եմ «Քրիստոսով» բանաձևը: Նրա՝ այդպես գրելը խորը իմաստ ունի: Բայց եթե ձեզ ցույց տամ Կողոսացիներից վերցված ցուցակը, որում տեսնում ենք այս բոլոր նախդիրները՝ «եղբայրներին ի Քրիստոս. հավատք ի Քրիստոս», ինչպես նաև ունենք «Քրիստոսից», ես իհարկե կենտրոնանում եմ «Քրիստոսով»-ի վրա, բայց կարող եք տեսնել, թե գրության մեջ որքան հարաբերություն կա՝ Քրիստոսով, Քրիստոսից, ի Քրիստոս: Այսպիսով, եթե նայեք այդ ցուցակին, ես ձեզ սա որպես օրինակ բերեցի, որ պատկերացնեք, թե ինչ եմ ասում, ինչը ինձ ստիպեց մտածել, և ես կարծես խոսեցի այս մասին առաջին հաղորդագրության մեջ, և քննարկել, թե հենց ինչ է սա նշանակում: Ես չեմ ուզում մտածեք, որ սա պարզ է, քանի որ պարադոքս կա; և պարզ է, և՛ ոչ: Հասկանալով սա, և ես հույս ունեմ, որ այսօր սա անելը ոչ միայն կօգնի մեզ ավելին հասկանալ Կողոսացիներում գրվածի մասին, այլև ինքներս մեր մասին ավելին հասկանալ: Ճատ կարևոր է ինքնուրույն հասկանալ, թե ինչն ենք ընկալում սուբյեկտիվորեն, իսկ ինչը՝ օբյեկտիվորեն, այն, ինչը փաստացի է, հիմնված է փաստերի վրա: Կարևոր է, որ կարողանանք առանձնացնել այս երկուսը: Ինչպես ասացի, երբ «Քրիստոսով» բանաձևի մեջ օգտագործում եմ «բանաձև» բառը, նկատի չունեմ, որ սա բանաձև է: Դա պարզապես ավելի կարճ դիմելու իմ ձևն է անընդհատ «Քրիստոսով» ասելու փոխարեն: Այսօր երբեմն կլսեք ինձ բանաձև կամ բանաձևային բառերն օգտագործելիս: Սա վերաբերում է «Քրիստոսով» ասելուն և նրան, թե ինչ պետք է դա մեզ համար նշանակի: Ինչպե՞ս պետք է հասկանանք սա: Եվ ես հավատում եմ, որ այսպես մենք ոչ միայն ավելի լավ կհասկանանք նամակը, այլև, ինչպես ասացի, մեր հարաբերական ճշմարտացիությունը կամ օբյեկտիվությունը Քրիստոսի հանդեպ: Այսպիսով, եթե հունարենին ենք նայում, այնտեղ գրված է en Christo: Հունարենում այդպես է: Եվ մենք հունարենում ունենք դա, սակայն մարդկանց այդպես չենք սովորեցնում: Բայց հունարենը հոլովների համակարգ ունի: Այդ համակարգը բաժանվում է միավորների,

որոնք օգնում են հասկանալ խոսքի մասերը: Հունարենում կա ութ խոսքի մաս, սակայն հիմնականում օգնագործվում են հինգը: Այս հոլովը կոչվում է «տրական», բայց կա նաև «սեռական» հոլով, որը, եթե սովորեիք սեմինարիայում, ձեզ կասեին, որ ամենակարևորն է հասկանալ, հավանաբար այն պատճառով, որ որ այն առավելապես օգտագործվում է այնպես, ինչպես փորձում ենք բացահայտել սա: Հիմա կասեմ հոլովները: Այսպիսով՝ սեռական, տրական, հայցական և կոչական. կարծում եմ սրանք բավական են, քանի որ հենց սրանց մասին եմ խոսելու. և ամենակարևորը՝ անվանական: Ահա սրանք են այն հինգ՝ մեկ, երկու, երեք, չորս, հինգ, ինձ հետաքրքրող հինգը, չնայած ութ հոլով կա: Ես հետաքրքրված եմ սրանով, քանի որ սա կօգնի ինձ ավելի լավ հասկանալ, թե ինչ պետք է ինձ համար նշանակեն en Christo-ն կամ «Քրիստոսով»-ը: Ահա թե ինչու ասացի, որ երբեմն խորանում եմ քերականության մեջ, բայց նրանց համար, ովքեր վաղուց են ինձ հետ, սա կրկնություն է: Նրանց համար, ովքեր նոր են, խնդրում եմ մի կարծեք, որ պետք է սովորեք սա: Ես ձեզ ցույց եմ տալիս, թե ինչու է երբեմն հունարենում քերականությունը կարևոր: Եկեք նայենք: Մի շրջան անենք, որպեսզի ցույց տանք, թե ինչպես է հոլովների համակարգն աշխատում նախդիրների հետ: Այսպիսով, շրջանակիս մեջ հիշում եք, որ ունենք en Christo, «Քրիստոսով» արտահայտությունը: Հիմա սա ներսում կգրեմ: Սա կլինի տրական, և տեսեք, որ այն շրջանակի ներսում է, լա՞վ: Հաջորդը գրենք «հայցական»: Եվ ինչպես ասացի, ձեզնից ոմանց համար սա լավ կրկնություն կլինի: Մյուսները գուցե բացարձակապես հետաքրքրված չլինեն, և դա նորմալ է, «անվանական» և «սեռական»: Հայցականը միշտ դրսում է: Ես մատնացույց եմ անում, լա՞վ: Այսպիսով, եթե շրջանակը, և ես կբացատրեմ, թե որն է շրջանակը, բայց սրանք բոլորը կապված են մեզ հետ: Մտածեք հայցականի մասին, և հիշեք, որ այն հիշողության սարք է: Երբ մեղադրում ես մեկին, դու նրան մատնացույց ես անում, ցույց ես տալիս մեկին, ով քեզնից դուրս է: Ահա այսպես ենք հասկանում հայցականը, որը հունարենում կունենա pro նախդիրը, կամ այստեղ անգլերեն կգրեմ: Այսպիսի կիրառություն ունենք, որն այստեղ 29 տոկոսով է հանդիպում, այսպիսով՝ նախդիրների 29 տոկոսը կլինի հայցական: Հիմա օրինակներ բերեմ: Eis, որը նշանակում է լինելով; և, կներեք, այստեղ գրեմ «դեպի»: Սա բացատրելու տարբեր ձևեր կան: Այստեղ նույնպես կարող ենք ունենալ eis, սա մեկ այլ նախդիր է, որ կարող ենք օգտագործել, այն դեռևս հայցական է, սակայն այժմ կարծես թափանցի անձի տարածք: Դրա տակ ունենք hupo, որը կրկին, բոլոր հոլովները չեմ գրելու, բայց այստեղ ունենք ek նախդիրը, որը նշանակում է «-ից»՝ ինչ-որ բան, որ բխում է ինչ-որ բանից, ինչ-որ բանի աղբյուրը, ինչպես երբ, օրինակ, ասում ենք՝ , «Նրա բերանից դուրս եկավ. . .»: Մի բան, որ դուրս եկավ իմ ներսից, կլինի սեռական հոլովում: Դա նման է անգլերենին, երբ պատկանելության հոլով ենք օգտագործում, օրինակ՝ «Սա Ջոնի գրիչն է»: Անգլերենում որոշակի բաներ ասելու որոշակի ձևեր կան, բայց ես նկարագրում եմ սրանք հունարենում իրենց ունեցած հոլովներով: Եվ «անվանական» հոլովը, որը հիմնականում լինում է նախադասության ենթական, և այստեղ ևս կունենանք այլ նախդիրներ, ինչպիսիք են apo-ն, որը նշանակում է «-ից» կամ «-ի»: Եվ վերջինը, որը բաց թողեցի, որն ուղղակի անցնում է այս ամենի միջով, dia-ն է, որը կարող է նշանակել «միջով», «միջոցով», «օգնությամբ» և այլն: Սակայն ես նայում եմ միայն տրականին, և դա իր պատճառն ունի: Այժմ, ուզում եմ մտածեք տրական հոլովի

մասին, մինչ ես կանգնած եմ այս լույսի տակ: Այս լույսն ինձ լուսավորում է: Ես լույսի մեջ եմ: Դա կլինի տրական հոլովը: Ես ոլորտում ինչ-որ բանի մեջ եմ կանգնած: Բայց քրիստոնյայի դեպքում, երբ խոսում ենք «Քրիստոսում» լինելու մասին, կարևոր է հասկանալ, որ քննարկում ենք այն, ինչ կատարվում է մեր ներսում: Ես Քրիստոսում եմ, Քրիստոսի հետ միության մեջ եմ, այսպիսով շրջանակը, եթե տեսնում եք օրինակը, շրջանակը ներկայացնում է իմ գոյության ոլորտը, և Քրիստոսն իմ մեջ է:

Այժմ, սա բացատրության ամենապարզ եղանակն է: Այստեղ պետք է նշեի, որ տրականը կազմում է 15 տոկոսը, եթե հետաքրքիր է: Սեռականը կազմում է 25 տոկոսը, իսկ անվանականը՝ 31 տոկոս: Լավ, քերականության մասին պատկերացում կազմեցինք: Հիմա, ինչու է սա կարևոր դառնում, տրական հոլով. այստեղ ավելին ենք տեսնում: Եվ, ձեզ արդեն ասացի, որ մի փոքր բարդ է լինելու, խնդրում եմ դիմացեք: Հունարենում տրական հոլովը երեք հիմնական իմաստ ունի՝ տեղի, միջոցի: Եթե ձեզ հետաքրքիր է, լավ է. եթե՝ ոչ, պարզապես լսեք, թե ինչ եմ ասում, և կանցնեմ առաջ: Հաջորդը, այսպես կոչված, իրական տրականն է: Մի փոքր դաս արեցինք հունարենի քերականության վերաբերյալ, բայց թե ինչու է սա կարևոր, վերադառնանք, և բացատրեմ «Քրիստոսով»-ը, և թե ինչ կապ կա սրանց միջև: Եվ երբ ավարտեմ տրականը շատ երկար և վերլուծական եղանակով բացատրելը, կտեսնեք, թե մի բան, որ բացարձակապես կապ չունի Կողոսացիների հետ, ինչպես է կիրառվում մեզինքն յուրաքանչյուրի պարագայում: Մտապահեք սա: Տրականը կարող է նախադասության մեջ անուղղակի խնդիր լինել: Սովորաբար այն հանդիպում է անցումային բայի կողքին: Օրինակ՝ եթե օգտագործեմ այս նախադասությունն անգլերենում, «Տղան գնդակն ինձ զցեց», «ինձ»-ը կլինի նախադասության տրական հատվածը: Սա այն դեպքում, երբ բայն ակտիվ ձայնով է: Եթե այն պասիվ ձայնով է, ես կասեի «Գնդակը դեպի ինձ զցվեց», նույն բանն է: Կա հետաքրքրության տրական, որը առավելության տրականի և թերության տրականի տակ է: Հունարենում այնքան տրական կա. պարզապես կարդամ դրանք ձեզ համար: Դրանք այնքան շատ են, որ նույնիսկ բոլորը չեմ հիշում: Կան հիմնականները, և ավելի խորացված քերականությունը, որը լսելիս ասում եք «Օ, վաու, այս ինչքան տրական կա»: Կա հղման տրական, զգացողության տրական, նպատակի, ստացողի, պատկանելության, պարզ շարադրանքով տրական, նախադրյալ տրական, տեղի տրական, ոլորտի տրական, ժամանակի, կանոնի, ասոցացման, ձևի, միջոցի, չափի, պատճառի և նյութի հարաբերական տրական: Չեմ ցանկանում ձանձրացնել ձեզ սրանով, բայց ահա թե ինչն է փորձում բացատրել: Անընդհատ անդրադառնալու եմ սրան, և դա իր պատճառն ունի, հիմա կասեմ: Եթե ես և դուք կարդացել ենք այս արտահայտությունները՝ «եղբայրներ Քրիստոսով» կամ «որևէ այլ բան...Քրիստոսով», բայց չենք հասկացել, թե իրականում ինչ պետք է դա նշանակի քրիստոնյայի համար: Այսպիսով, առաջին բառերը, որ կկցեմ Քրիստոսով լինելուն, «միություն»-ն է, քանի որ սա իսկապես նշանակում է նույնականացում, միավորում և միություն կամ միասնություն Քրիստոսին կամ Քրիստոսի հետ: Բայց եթե չխոսեմ այս մասին, բոլորս կպարտվենք: Պատճառը հետևյալն է: Երբ սկսեցի ուսումնասիրել սա, հասկացա, որ այն, թե ինչպես է Պողոսը օգտագործում «Քրիստոսով» բառը, միայն մեկ ձևով չէ: Փաստացի, այն շատ եղանակներով է օգտագործվում և շատ բաներ է ակնարկում, այնպես որ ուզում եմ դրանց մասին խոսել: Բայց ուզում եմ մի բան ասել և արդեն ասացի, որ սա

վերաբերում է մեր օրերին: Մենք ապրում ենք այնպիսի միջավայրում, որտեղ մարդիկ աներևակայելիորեն բաժանված են ըստ սոցիալական դիրքի, մաշկի գույնի, քաղաքական հայացքների: Եվ ես բազմիցս ասել եմ նախորդ շաբաթների, եթե ոչ ամիսների ընթացքում, որ սա ան-Աստված հասարակության արդյունքն է: Թույլ տվեք ապացուցել սա: Երբ ես օգտագործում եմ այս արտահայտությունը կամ բանաձևը տրականով՝ en Christo, այն Քրիստոսին իմ մեջ է դնում: Սա պարզապես խոսքի մաս չէ: Ինչի մասին է այստեղ ասվում. սա կարող է շատերին դուր չգալ, բայց ինձ համար միևնույն է: Միությունը կամ Քրիստոսով լինելը ռասայական միասնություն է: Եթե նայեք, թե ինչ է կատարվում աշխարհում, միասնություն չկա, կան խմբավորումներ և բանդաներ: Մենք հաճախ ասել ենք, որ կրոնի շատ մասնիկներ կարող եք նկարագրել որպես խմբավորումներ և բանդաներ: Բայց ոչ այն ժամանակ, երբ Քրիստոսով եք: Այդ ռասայական միասնությունը Քրիստոսի հետ, եթե Քրիստոսի մեջ եք, ձեր տեսլականը, այն, թե ինչպիսին եք տեսնում աշխարհը, դարձել է կապված միություն, կարծես Քրիստոսի ակնոցը կրեք: Եվ դուք ինքներդ կարող եք նայել աշխարհին և այն տեսնել Քրիստոսի ուսանյակների միջով: Ահա թե ինչու եմ խոսում սրա մասին, մի կարծեք, թե սա ինչ-որ բառի ուսումնասիրություն է գիտնականների կամ մի քանի մարդկանց համար, ովքեր հասկանում են՝ ինչ է նշանակում տրական: Սա մեր ժամանակակից հասարակության կատարյալ ձախողումն է «Քրիստոսով» լինելու պես պարզ բառը չհասկանալու գործում, ահա թե ինչու էի ուզում երկարացնել և չասել «Կողոսիայում», այլ ասել «Գլենդելում գտնվող Քրիստոսով եղբայրներին և քույրերին» կամ Օրովիլում, կամ Բերկլիում, կամ որտեղից որ լսում եք: Սա միություն է, կներեք, բայց շատ մարդիկ նկարագրում են սա որպես ինչ-որ միստիկ, անբացատրելի, անհայտ տարր, սակայն չնայած որ մեր հանդեպ աստվածային անհայտ տարրեր կարող են լինել, որոնք մենք մեր մարմնով չենք կարող իմանալ, այս միությունն ունի հարթություններ, որոնք իմանալ մենք կարող ենք: Թույլ տվեք մի բան ավելացնել: Երբ մենք օգտագործում ենք «Քրիստոսի հետ միություն» արտահայտությունը, միությունը պայմանավորվածություն կամ միասնություն է, մասնավորապես՝ ընդհանուր հետաքրքրություններ ունեցող անձանց միջև: Ես սիրում եմ միասնության ստուգաբանությունը, որը գալիս է «պինդ» բառից. այն տասնչորսերորդ դարի վերջի իմաստ ունի, որ նշանակում է «ոչ փուչ» կամ «ոչ դատարկ»՝ sol բառի նախահնդեվրոպական արմատից: Դա նախահնդեվրոպական արմատն է, որը կապված է մի խումբ բառախմբերի հետ, ինչպիսիք են «ապահով», «փրկել», «փրկություն» կամ «ամբողջ» բառերը: Ես մտածեցի, որ մի տեսակ հետաքրքիր է, որ երբ հետևում ես բառի էությանը, նաև ստանում ես պատասխանը, թե ինչպիսին պետք է լինես Քրիստոսով՝ ոչ դատարկ: Քրիստոսով մենք դատարկ չենք: Քրիստոսով մենք ամբողջական ենք: Տարօրինակ է, որ միասնության ստուգաբանությունն ինձ առաջնորդեց ուղիղ դեպի այն, թե ինչպիսին պետք է լինի քրիստոսյան: Բայց եթե ավելի խորանանք, իսկ ես դա ուզում եմ անել, թույլ տվեք ասել, որ Քրիստոսի հետ միությունը կամ Քրիստոսով լինելու գաղափարը քննարկելու լավ առիթ կա: Նախ և առաջ, մենք պետք է հասկանանք և գտնենք ավելի խորը իմաստը: Տեսեք: Ամբողջ մարդկությունը... ամբողջ մարդկությունը՝ հրեաները, մուսուլմանները, կաթոլիկները, հավատքի բոլոր ձևերը, բոլոր հարթությունները, նույնիսկ բոլոր անհավատները, յուրաքանչյուր աթեիստ, Ադամի մեջ են: Նրանց կեցության վիճակը Ադամի մեջ է: Դա ամբողջ արարումն է: Եվ կան նրանք, ովքեր Քրիստոսով են: Ադամի մեջ միությունը, փաստորեն,

այն է, ինչի մասին Պողոսը խոսում է և Ջոնեացիներ 5-ում և 1-ին Կորնթացիներ 15-ում: Այնտեղ կողք կողքի դրված համադրություն կա, որպեսզի ցույց տրվի հակաթեզը կամ տարբերությունները, որոնք առկա են Ադամի մեջ և ոչ թե Քրիստոսով միավորվածների միջև: Այսպիսով, «Ադամի մեջ» եղած միությունը ամբողջ մարդկության համար՝ անկախ նրանից, թե ով ես, ինչ մաշկի գույն ունես: Տեսեք, հենց այստեղ ենք մենք սխալվել: Գուցե ասեք՝ «բայց սա շատ պարզ է»: Ոչ, սկզբի համար ուսումնասիրեք «մարդկային ռասա» տերմինը. երբևէ մտածե՞լ եք, թե ինչ պետք է հասկանալ այդ տերմինի ներքո: Եթե մենք մարդկային ռասա ենք, այդպես չի թվում: Այլ կերպ ասած՝ բոլորս միանման լինելու դրոշակի տակ չենք հանդես գալիս: Մենք բոլորս կծնվենք, բոլորս կապրենք տարբեր մակարդակներում, տարբեր տևողությամբ, տարբեր վիճակներում, և բոլորս էլ կմահանանք: Այդ ամենը Ադամով: Եվ միությունը, որը մենք ունենք Ադամով, ստանում ենք լիովին անվճար, երբ ծնվում ենք: Դու գոյանում ես Ադամով: Ադամով ձեր միությունը, եթե չխախտվի Քրիստոսով ձեր միությամբ, աշխարհի միությունն է: Եվ այն, ինչ ես փորձում եմ ցույց տալ այստեղ այն է, որ Քրիստոսով միությունը բերում է որոշ արմատական փոփոխություններ: Նախ, թույլ տվեք գնալ Ջոնեացիներ 5, որովհետև ուզում եմ ձեզ ցույց տալ, որ մենք իսկապես կարող ենք, և հիշեք՝ ես չեմ ուզում՝ մտածեք, թե հեռացել եմ Քրիստոսով լինելու գաղափարից, որը դեռ չեմ բացատրել: Բայց եթե կարդանք Ջոնեացիներ 5-ը, սկսենք խոսք 12-ից՝ «Ինչպես որ մեկ մարդով մեղքը աշխարհ մտավ, եւ մեղքով էլ՝ մահը, այնպես էլ բոլոր մարդկանց մեջ տարածուեց մահը»: Նախ մահը, հետո մահը պետք է տարածվեր բոլոր մարդկանց՝ ամբողջ մարդկության վրա: Դա է: Դա է քո բաժինը, եթե դու միայն Ադամի մեջ ես: Եվ կրկին, կասեմ սա, որովհետև կարծում եմ, որ երբեմն ես խոսում եմ, իսկ մարդիկ պարզապես կարծես ասում են «Օ, ես ուզում եմ սա բաց թողնել»: Բայց դա սխալ է. տեսեք, Աստված Ադամի մեջ հաշտեցման լուծում չի տվել: Այն, ինչ նա թողել է Ադամում, և դա շատ ավելի ուշ ենք տեսնում, իհարկե, որովհետև Ադամի ժամանակ օրենք չկար, Ադամից մինչև Մովսեսի ժամանակները օրենք չկար: Բայց Ադամի գործողությունները բերեցին օրենքը, մեղքը և մահը, մահ բոլոր մարդկանց համար. «քանզի մինչեւ օրենքը մեղքը աշխարհում կար. բայց մեղքը մեղք չի համարում, ուր չկայ օրենք. սակայն մահը թագաւորեց Ադամից մինչեւ Մովսես»: Յետ ես գնում և կարդում ես Ադամից մինչև Մովսես բոլոր մարդկանց մասին, Բացի Ենոքից, որին Աստված կենդանի տարավ երկինք: Նա նրան չսպանեց. նա չմահացավ Երկրի վրա: «Նոյնիսկ նրանց վրայ, որոնք Ադամի յանցանքի նման յանցանք չգործեցին, Ադամի, որը օրինակն է նրա, որ գալու էր»: Երբ խոսում ենք այս մասին, և Պողոսը նրան անվանում է «օրինակն է նրա, որ գալու էր», ու՞մ մասին է խոսում: Քրիստոսի: «Բայց շնորհն այնպես չէ, ինչպես յանցանքը. որովհետեւ, եթէ մեկի յանցանքով շատեր մեռան, որչա՞փ եւս առաւել Աստծու շնորհները եւ պարգեւները մե՛կ մարդու՝ Յիսուս Քրիստոսի շնորհով աւելացան շատերի մեջ»: Այսպիսով, այստեղ տեսնում ենք անվճար պարգև, շնորհ: «Եւ այս պարգեւները այնպես չեն, ինչպես որ է մեկ մարդու մեղքի հետեւանքը. որովհետեւ մեկի մեղքի դատաստանը դատապարտութիւն բերեց, իսկ շնորհը գործուած շատ մեղքերի արդարութիւն բերեց»: Այսպիսով, այստեղ տեսնում ենք դատապարտում, ճի՞շտ է: Դատապարտում: Իսկ այստեղ տեսնում ենք արդարություն կամ արդարացում: Ինչպես ուզում եք, այնպես նայեք: Ես կասեմ՝ արդարություն: Բոլորդ պետք է արդեն իմանաք՝ ինչ է դա նշանակում: «Ապա ուրեմն, ինչպես մեկ մարդու յանցանքով բոլոր մարդիկ

դատապարտութեան մատնուեցին»: Այստեղ ավելացնենք՝ դատապարտում: «Նոյնպէս եւ մէկի արդարութեամբ բոլոր մարդիկ պիտի հասնեն կեանքի արդարութեան շնորհին. որովհետեւ, ինչպէս մէկ մարդու անհնազանդութեամբ շատ մեղաւորներ եղան, նոյնպէս եւ մէկի հնազանդութեամբ շատ արդարներ պիտի լինեն: Բայց օրէնքը մեջտեղ ընկաւ, որպէսզի յանցանքները բազմանան. որովհետեւ, ուր որ մեղքը շատացաւ, շնորհն առաւել եւս շատացաւ: Ինչպէս որ մեղքը թագաւորեց մահուան մէջ, նոյնպէս եւ շնորհը պիտի թագաւորի արդարութեամբ մինչեւ յաւիտենական կեանք մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով»: Այսպիսով, այստեղ տեսնում ենք «հավիտենական կյանք»: Ինչն է կարևոր այստեղ. այն, թէ ինչ է Պողոսն այստեղ ցույց տալիս կամ համադրում, և որ ամենակարևորն է՝ ասում, և դա վերաբերում է այսօրվան, ոչ միայն հռոմեացիներին կամ կողոսացիներին. բոլորն են Ադամի մէջ: Սա հարաբերական է, դիրքային է, միութիւն է. իրականում՝ մահվան միութիւն է: Սա միութիւն է, որն ասում է. «բոլոր մարդկանց մէջ տարածուեց մահը», հետևաբար, սա նաև դատապարտութեան միութիւն է, մինչև որ չլինենք Քրիստոսով: Այնուհետև, երբ լինենք Քրիստոսով, կկարողանանք տեսնել անվճար պարգևը՝ շնորհը, արդարութիւնը և հավիտենական կյանքը: Այժմ, եթէ մեկ քայլ էլ առաջ գնանք, նայենք 1-ին Կորնթացիներ 15-ին, և Պողոսը նորից է այս նույն համադրութիւնն անում, սակայն այս անգամ մի փոքր այլ բան է փորձում ցույց տալ: Այժմ, բոլորս նայում ենք այդ 1-ին Կորնթացիների 15-րդ հատվածին՝ որպէս Յարութեան գլուխ կամ Յարութեան բաժին: Բայց եթէ սկսեք կարդալ, և, իհարկէ, այս ամենը Քրիստոսի հարութեան մասին է, բայց եթէ շարունակեք կարդալ, և մոտավորապէս 35-րդ խոսքից տեսնում եք երկրայինի և երկնայինի, Ադամի, Քրիստոսի այդ համադրումը: Ոմանք կասեն. «Ինչպէ՞ս են հարութիւնն առնում մեռելները: Կամ ի՞նչ մարմնով պիտի գան»: Եվ նա ասում է, սա 1-ին Կորնթացիների 15-րդ հատվածն է, որը սկսվում է 35-րդ խոսքից. «Անմի՛տ, ինչ որ դու սերմանում ես, չի կենդանանայ, եթէ չմեռնի: Եւ ինչ որ սերմանում ես, սերմանուածը այն նոյն մարմինը չէ, որ ծնուելու է, այլ՝ մի մերկ հատիկ, լինի ցորենի թէ այլ սերմերի: Եւ Աստուած նրան մարմին է տալիս, ինչպէս որ կամենում է. եւ սերմերից իւրաքանչիւրին՝ իր մարմինը: Ամեն մարմին նոյն մարմինը չէ. այլ է մարմինը մարդկանց եւ այլ է մարմինը անասունների, այլ է մարմինը թռչունների եւ այլ է մարմինը ձկների: Կան նաեւ երկնաւոր մարմիններ եւ երկրաւոր մարմիններ. բայց այլ է փառքը երկնաւորների եւ այլ է փառքը երկրաւորների»: Այժմ նայեք 42-րդ խոսքին, «Այսպէս է նաեւ մեռելների յարութիւնը. սերմանում է ապականութեամբ» ահա Ադամը, «յարութիւն է առնում առանց ապականութեան». ահա Քրիստոսը, «սերմանում է անարգութեամբ»՝ Ադամը, «յարութիւն է առնում փառքով»՝ Քրիստոսը, «սերմանում է տկարութեամբ»՝ Ադամը, «յարութիւն է առնում զօրութեամբ»՝ Քրիստոսը, «սերմանում է շնչաւոր մարմին»՝ Ադամը, «յարութիւն է առնում հոգեւոր մարմին»՝ Քրիստոսը. «Եթէ կայ շնչաւոր մարմին, կայ եւ՝ հոգեւոր: Այսպէս էլ գրուած է. «Առաջին մարդը՝ Ադամը, եղաւ կենդանի շունչ. վերջին Ադամը՝ կենդանարար հոգի»: Եվ եթէ շարունակեք կարդալ, կտեսնեք համադրումը, որը ցույց է տալիս, թէ ինչքան ավելի շատ բան կա այն մարդկանց համար, ովքեր Քրիստոսով են: Բայց այն, ինչ ես ուզում եմ առանձնացնել այստեղ, Քրիստոսով լինելն է, և սա շատ դժվար է այսպէս բացատրել, քանի որ այնքան պարզ է հնչում: Բայց լինել Քրիստոսով նշանակում է, այստեղ շատ հնարավորութիւնների մասին կարող ենք խոսել, բայց մեքերեմ մի գիտնականի՝ Դայամանին, ով այսպէս է արտահայտվել Քրիստոսով լինելու

մասին. Քրիստոսով լինելը «հնարավոր ամենամտերիմ ընկերակցությունն է, որ քրիստոնյան կարող է ունենալ կենդանի Քրիստոսի հետ»: Ինձ հետաքրքիր է՝ այստեղ գտնվողներից քանիսն են, որ երբ կարդում են այդ «Քրիստոսով»-ը, հասկանում են ամբողջ իմաստը, որ դրված է այս երկու բառերի մեջ, քանի որ ես դա եմ փորձում բացատրել: Այնքան հեշտ է անցնել ինչ-որ բանի կողքով՝ առանց դրա խորությունն ու կշիռը տեսնելու: Ոչ միայն համադրումը չտեսնելը, կամ այն, ինչ ամբողջովին տարբեր է, այլ այն, թե ինչն է սա ցանկացած այլ բանից տարբերում: Այսպիսով, վերադառնանք տրականին: Եթե հասկանանք, որ այս փոքրիկ նախդիրը՝ հունարեն en, տրական հոլովով է, երբ ես ձեզ հետ խոսում եմ Քրիստոսով լինելու մասին, ինչի մասին է ասվում իրականում, և, չնայած մի պահ կարող է անիմաստ հնչել, բայց իրականում այստեղ խոսվում է Քրիստոսի՝ քո մեջ լինելու, և քո՝ Քրիստոսի մեջ լինելու մասին: Ես միայն մի եղանակով կարող եմ սա բացատրել, այնպես որ բացեք Յովհաննես 17-ը: Տեսեք, Քրիստոսի մասին ասված ոչինչ չկա, որին մենք չկարողանանք նայել և հասկանալ, որ մենք ինչ-որ տեղ Նրա՝ մեզ հայտնածի միկրոտիեզերքն ենք, եթե մենք ինքներս մեզ անվանում ենք քրիստոնյա, Քրիստոսի փոքրիկ հետևորդ: Այսպիսով, սա միասնության, Քրիստոսով միության գաղափարն է, բայց Նա նկարագրում է Յոր հետ իր հարաբերությունները և Նրա քահանայապետական աղոթքը, որը, փաստորեն, Տիրոջ աղոթքն է, այլ ոչ թե այն, ինչ տեղի է ունենում Մատթեոս 6-ում, «Տե՛ր, մեզ աղոթել սովորեցրու», որովհետև Յիսուսը երբեք չէր կարող այս աղոթքն անել «ներիր մեզ»: Նա ներման կարիք չուներ: Սա իրականում Տիրոջ աղոթքն է: Նա խոսում է Յոր հետ: Մենք այն կոչում ենք քահանայապետական աղոթք: Սկսելով 21-րդ խոսքից՝ Յիսուսը, Յոր հետ խոսելիս ասում է. «Որ ամենքը մեկ լինեն, ինչպես դու, Յայր, ինձանում, եւ ես քեզանում»: Երբևէ կանգ առել ու մտածե՞լ եք Քրիստոսով լինելու մասին ճիշտ այնպես, ինչպես Քրիստոսն է խոսում Յոր և Քրիստոսի հարաբերությունների մասին: Երբևէ կանգ առե՞լ եք այս հարցին այդպես նայելու համար: Քանի որ այն հենց այդպես է պետք հասկանալ, ոչ թե աջ ու ձախ օգտագործել այն՝ որպես սիրունիկ մի արտահայտություն, այն խորն է ու եական: Սա սուբյեկտիվ չէ: Սա է խնդիրը:

Յուրաքանչյուրը, ով կցանկանա սա ներկայացնել որպես սուբյեկտիվ կարծիք՝ այսինքն, թե ինչ եմ ես զգում, իմ կարծիքը, իմ անձնական նաախասիրությունները, բաց կթողնի առաջին և ամենակարևոր օբյեկտիվ իմաստը, որը փաստացի է: Ըստ հավատացյալի՝ մենք նայում ենք Քրիստոսին և Նրա մեջ ենք: Տարբեր խոսքերում ասվում է. «հապա հագե՛ք Տէր Յիսուս Քրիստոսը» կամ «Որ Քրիստոսը հաւատքով բնակուի ձեր սրտերումը», բայց Քրիստոսով լինելը, Նրա հետ միության մեջ լինելը միակ ճանապարհն է իսկապես հասկանալու համար, թե ինչ է ասվում և ինչպես է Քրիստոսը նկարագրում իր հարաբերությունները Յոր հետ: Թույլ տվեք՝ նորից սկսեմ: Որպեսզի նրանք բոլորը «որ մեկ լինեն՝ ինչպես մենք էլ մեկ ենք: Ես նորանցում՝ եւ դու ինձանում, որ կատարեալ լինեն միութիւնում, որպեսզի աշխարհքը գիտենայ, թէ դու ուղարկեցիր ինձ. եւ սիրեցիր նորանց՝ ինչպես ինձ սիրեցիր: Յայր, նորանք որ ինձ տուիր, կամենում եմ, որ ինչ տեղ որ ես եմ՝ նորանք էլ ինձ հետ լինեն. որ իմ փառքը տեսնեն, որ տուիր ինձ. որովհետեւ աշխարհքի հիմնելուցն առաջ սիրեցիր ինձ»: Յետո սա նորից է կրկնվում: Սա առաջին անգամը չէ: Այս «Եսը՝ իմ մեջ» Յոր մեջ Քրիստոսի միության կամ մեկ լինելու գաղափարի ևս երկու դեպք կա: Ես չեմ ուզում, որ դուք առանձնացնեք իմաստը Քրիստոսով լինելուց, քանի որ իմաստը հենց դրանում է: Այդ իմաստն ուսումնասիրել

ձախողելը շատ հեշտ է: Բայց եթե մի փոքր խորանաք, շատ բաներ կգտնեք, որոնք կօգնեն հասկանալ, թե ինչպես են Քրիստոսով մեր լինելը, Նրա հետ մեր միությունը մեզ օգնում աճել ու զարգանալ տարբեր ձևերով: Երբ մենք Քրիստոսով ենք, որոշակի բաներ կան, որ պետք է հաշվի առնենք: Նոր էջ բացեմ: Ես կցանկայի ասել, որ Քրիստոսով-ը ճյուղավորումներ ունի դեպի անցյալ, ներկա և ապագա. ի՞նչն է անցյալում: ՈՒՆԵՆՔ Քրիստոսի չարչարանքները: Ես պետք է փորձեմ սա ավելի լավ բացատրել, քանի որ զգում եմ, որ եթե դա չանեմ, շատ մարդկանց կկորցնեմ: Եվ այսպես, դուք ինչ-որ մեկի հետ հարաբերությունների մեջ եք: Երբ նոր եք սկսում այդ հարաբերությունները, դուք այդ մարդուն ճանաչում եք ներկայում, քանի որ դա է ձեր ասոցիացիան:

Բայց ձեր հարաբերությունների զարգացման հետ մեկտեղ դուք սկսում եք ավելի հասկանալ և իմանալ այդ մարդու անցյալի մասին, ինչպես նաև ծրագրեր կազմել ապագայի վերաբերյալ: Եվ լինելով Քրիստոսով՝ մենք կապված ենք անցյալին, որը ինչ-որ կերպ Նրա չարչարանքների մասն է կազմում: Հիշեք, որ Քրիստոսով լինելուն կցված են այս բոլոր հարթությունները: Չեք կարող միայն մեկ մասնիկ վերցնել. «Օ, ես Քրիստոսի մեջ եմ, և Նա իմ մեջ է»: Ոչ, դուք ինչ-որ կերպ կապված եք Նրա չարչարանքներին: Չկա երկու աստվածաբան, որ համաձայնության կգան այն հարցում, թե ինչպես է սա պետք հասկանալ, բայց ես այսպես կասեմ: Անցյալի տեսանկյունից, ես կասեի, որ ամեն պայթար մեղքի և գայթակղության դեմ, ինչպես ասվում է Սուրբ Գրքում, օրինակ, որ Նրան գայթակղեցին ամեն կերպ, ինչպես մեզ: Բայց Նրա ամբողջ կյանքը, եթե դիտարկենք Նրա ամբողջ արձանագրված կյանքը, որոշակի փորձություն է: Եվ երբ խոսում ենք լինելու մասին, քանի որ Սուրբ Գրքում շատ է խոսվում այն մասին, որ մենք Նրա չարչարանքների մասնակիցներն ենք: Մասնավորապես, մտածում եմ, օրինակ, Փիլիպպեցիների հատվածների մասին, որտեղ Պողոսը խոսում է այս մասին: Ինչ վերաբերում է մասնակից լինելուն, այնպես չէ, որ ինձ կամ ձեզ խաչելու են ծառի վրա, բայց եկեք մտածենք: Նրան ծաղրում էին, Նա եկավ յուրայինների մոտ, և յուրայինները չընդունեցին Նրան: Քանի՞ անգամ է եղել, որ գաք ձեր ընտանիքի կամ ընկերների մոտ, իսկ ձեր սիրտը Աստծուն է, դուք սիրում եք Աստծուն, և սկսում եք խոսել այդ մասին, իսկ մարդիկ ասում են. «Դու գիժ ես: Ես չեմ ուզում այս մասին լսել»: Կամ նրանք արհամարհում են ձեզ: Նրանք ձեզ լսում են, բայց կարծես արհամարհում են, հետո սկսում են խուսափել ձեզնից: Ես խոսում եմ այսպիսի մասնիկ լինելու մասին, հիշում եք՝ խոսեցի միկրոտիեզերքի մասին: Ի՞նչ է ինձ համար նշանակում Քրիստոսի չարչարանքների մասնակիցը լինել: Դե, ես գիտեմ, թե ինչպես են քեզ մերժում Աստծո պատճառով, կամ քեզ մեջքով շրջվում: Հոգևոր հովիվ լինելուս ընթացքում ես հարյուրավոր, եթե ոչ հազարավոր մարդկանց հետ եմ խոսել թե այստեղ, թե երբ ճամփորդել եմ, ովքեր ոչ մի կերպ չեն կարողանում հասկանալ՝ ինչ եմ ես ասում Քրիստոսի չարչարանքներին մասնակից լինելու մասին: Ձեզնից որևէ մեկը «չարչարվե՞լ» է, ես չեմ խոսում հալածանքների մասին: Սովորաբար դրանք փոքր բաներ են, որոնք աշխարհում ապրելու մի մասն են:

Քանի՞ հոգի գիտեք, ովքեր սկսել են ձեզնից խուսափել կամ չեն ցանկացել ձեր մասին ոչինչ իմանալ, որովհետև գիտեն Քրիստոսի հանդեպ ձեր նվիրվածության մասին: Որոշակի առումով դա միկրոտիեզերք է. իհարկե Քրիստոսի չարչարանքները չեն, բայց դա մերժում է: Հետո ասվում է, որ Նրան ծաղրել են: Եվ դա բազմիցս է եղել. «Դե, եթե իսկապես Աստծո Որդին ես, իջիր այդ ծառից և փրկիր ինքդ քեզ»: Քանի՞ անգամ են ձեզ

ծաղրել աղոթելիս, երբ ինչ-որ մեկին ասել եք, որ հիվանդ եք, և աղոթում եք, որ Աստված բժշկի ձեզ, կամ աղոթել եք, որ մեկ ուրիշը բժշկվի. «Օ, հիմարությունն է: Դա օգուտ չի տա»:

Ավելի լավ առաջարկ ունե՞ք, որովհետև ես չեմ տեսնում, որ ինչ-որ ծրագիր ունեք, բացի սովորական դեղերից: Ուրիշ բան կարո՞ղ եք առաջարկել: «Ոչ»: Դե ինչ, ուրեմն լռեք: Բայց սա նմանատիպ ծաղրանք է: Տեսեք, մենք Քրիստոսի հետ նույնականացումը հասկանալիս շատ ենք սև ու սպիտակի բաժանում: Բայց եթե հայացք եմ նետում Զավատքի Կենտրոնում անցկացրած իմ տասնհինգ տարիներին, տեսնում եմ, որ շատ բաներ ճիշտ են: Նրան անհիմն ասել են: Զիմա կմտածեք. «Բայց դա Քրիստոսն էր»: Բայց տեսեք, Քրիստոսը ձեր մեջ է, Քրիստոսի հանդեպ հավատքով դուք կապված եք Քրիստոսի հետ, և չեք հասկանում՝ ինչու են մարդիկ ձեզ ատու՞մ: Նրանք ձեզ չեն ատում. նրանք ատում են ձեր միջի Քրիստոսին: Զետո սկսում եք հասկանալ, որ այս դիրքային հարաբերությունը պարզ գաղափար չէ:

Զիմա այլ կողմից նայե՛նք՝ կարծես թե խոսելու ենք Քրիստոսի հետ խաչվելու մասին: Քրիստոսի հետ խաչվելու դեպքում մենք ունենք Քրիստոսի չարչարանքները: Մի հատված կա, որն ուզում եմ կարդալ, որովհետև երբեմն մեջբերումներ եմ անում, և այն մարդիկ որոնք մի փոքր նոր են մասնակցում ծառայություններին, մտածում են, որ դրանք իմ բառերն են: Դրանք իմ բառերը չեն: Սրանք Պողոս առաքյալի բառերն են Գաղատացիների 2-րդ գլխի 20-րդ խոսքից. Նա ասում է. «Եւ կենդանի եմ, ոչ թե այլ եւս ես, այլ Քրիստոս է կենդանի ինձանում. Եւ ինչ որ հիմա կենդանի եմ մարմնով՝ Աստուծոյ Որդու հաւատքովն եմ կենդանի. որ ինձ սիրեց եւ իր անձը ինձ համար մատնեց: Եւ ես Աստուծոյ շնորհքը չեմ անարգում, որովհետեւ եթէ արդարութիւնն օրէնքիցն էր, ուրեմն Քրիստոսը զուր տեղը մեռաւ»: Քրիստոսի հետ խաչվելը, ևս մեկ անցյալ, իմիջիայլոց սա մեկ այլ բան է, քան երբ Պողոսն ասում է. «Ես մեռած եմ, ես չեմ ապրում. կամ ես ապրում եմ, բայց ոչ եսը»: Այստեղ տարբերություններ կան: Եկեք վերցնենք «չարչարանքները», «խաչելությունը», և անցյալում ևս մի քանի բան՝ մահ, թաղում, հարություն և Եսխաթոլոգիական բաներ, բայց դա ավելի ապագային է մոտ, իսկ ես չեմ ուզում շատ առաջ անցնել: Բայց մենք նույնականացվում ենք Քրիստոսի հետ չարչարվելու, Քրիստոսի հետ խաչվելու հետ, այդ պատճառով ասացի դրանք: Եթե պետք է ինչ-որ տեղից սկսենք, նախ և առաջ Աստվածաշնչում ասվում է. «Եթե Քրիստոսի ոգին չունեք, Նրան չեք պատկանում»: Այժմ վերադառնանք սկզբին, և ես ձեզ ասում եմ, որ ամեն ինչ սկսվում է այն պահից, թե ինչպես են սկսվում ձեր հարաբերությունները Աստծո հետ, բայց քանի այստեղ հիմք եմ ստեղծում, ասեմ, որ Քրիստոսի հետ խաչվելը Նրա մահվան եղանակով խաչվելն է: Եթե Քրիստոսը միայն խաչված լիներ և հարություն չառներ, մեզ՝ հավատացյալներիս համար դա իմաստ կլիներ, և արժեք չէր ունենա: Կարևոր է այն փաստը, որ Նրան թաղեցին, և Նա իր շիրիմից հարություն առավ այնպես, ինչպես և ասել էր, սակայն երբ ասում ենք Քրիստոսի հետ խաչվել, դա նման է ամեն մասնիկը նշելուն. պիտի վերադառնամ, չէ, մոռացեք հետ գնալու մասին: Զեմ ուզում խառնել պլանշետս՝ Ադամ, Քրիստոս: Այսպիսով, Ադամի մեջ լինելու ամեն տարր մանրացվում է: Քրիստոսի հետ խաչվելը իմ Ադամային բնույթն է: Դա նաև վերաբերում է մահանալուն, մահվանը, մահվան մեջ իմ և Նրա միությանը և Նրա հետ թաղվելուն: Իմ հավատքի կամ Նրա հետ իմ միության այս երեք գործողությունները հավատացյալի և անհավատի միջև, կամ միայն Ադամի մեջ,

թե՛ քրիստոսով լինելու տարբերությունն են: Բայց ինչն է կարևոր: Խաչելությունը, մահը և թաղվելը խոսում են մի կարևոր բանի մասին այն մարդկանց համար, ովքեր դժվարանում են հասկանալ օրենքը: Սա հասկանալու ամենահեշտ տեղը հավանաբար Գաղատացիներն են, որտեղ Պողոսն ասում է. «Օրենքը դաստիարակ եղաւ՝ մեզ քրիստոս Յիսուսին բերելու»: Հենց որ հավատքը ներկա է, օրենքն այլևս այնտեղ չէ: Ինչու՞, որովհետև մենք դուրս եկանք այդ անեծքի տակից. անեծքն անցավ քրիստոսին: Այսպիսով, այս երեք ասոցիացիաները՝ խաչելություն, մահ և քրիստոսի թաղվելը, ըստ էության ոչ թե դադարեցնում են Ադամի մեջ լինելը, այլ կոտրում են այն, ինչը մեզ կապում և պահում է Ադամի մեջ: Եվ այս ամենը փոխանցվում է քրիստոսին՝ խաչելությամբ: Սրանք տեղավորում ենք անցյալի համատեքստում:

Ներկայի, ինչպես նաև ապագայի համատեքստում հարությունն է, և ես սրանք տեղավորում եմ Էփեսոսցիական իմաստի մեջ, քանի որ հստակ է, որ այն կիրառություն ունի նաև ապագայում: Սակայն քրիստոսը ներկայում և քրիստոսով հարություն առնելը, քանի որ ես մտաբերում եմ այն հատվածը, երբ Հռոմեացիներում Պողոսն ասում է, օրինակ. «Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահուան մեջ, որպեսզի, ինչպես որ քրիստոս մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպես եւ մենք քայլենք նոր կեանքով. որովհետեւ, եթէ նրա մահուան նմանութեամբ տնկակից եղանք նրան, պիտի լինենք նաեւ նրա յարութեան նմանութեամբ»: Չգիտեմ՝ արդյոք տեսնում եք այս պարզ գաղափարը, բայց քրիստոսով լինելու խորությունը շատ իմաստներ ունի: Կարևորն այն է, որ երբ ես քրիստոսի հետ միության մեջ եմ, երբ ես քրիստոսով եմ, երբ ես հավատում և վստահում եմ նրան, դրանք ավելի կարևոր են դառնում, քանի որ ես այլևս Ադամի սկզբունքների համաձայն չեմ ապրում, թեև դեռևս կրում եմ Ադամի հագուստը: Սուրբ Գիրքն ասում է, որ քրիստոսով ես նոր էակ եմ դառնում՝ պարզապես նրան հավատալով և վստահելով: Ես դա հասկանում եմ այսպես՝ հինը, ըստ էության, թաղվում է: Ի՞նչ է դրան հաջորդում: Դե, ներկայում ես ապրում եմ քրիստոսով նոր կյանքում: Սակայն սա նաև ապագայի մասնիկ է պարունակում: Հիշում եք, երբ խոսում էի դրախտի և դժոխքի մասին՝ դրախտի ապագա ժամանակի վերաբերյալ: Ես կնույնակացվեմ կամ նրա հետ միության մեջ կլինեմ նոր դրախտում և նոր երկրի վրա այս կյանքից տարբերվող ձևով և ոչ այնպես, ինչպես նրա հետ միության մեջ էի: Ինչու՞, որովհետև ես դեռևս թերի, մեղսավոր կարգավիճակում եմ, սակայն երբ փառավորված մարմինն ունենամ և այդ փառավորված կարգավիճակում լինեմ, բոլորովին այլ կերպ կհասկանամ իմ միությունը քրիստոսի հետ և նրա մեջ: Բրիստոսով լինելու մասին խոսելիս կարևոր է այս ամենին ուշադրություն դարձնել, և եթե խոսեմ այս անցման մասին, ահա թե ինչ ենք կարդում Սուրբ Գրքում. «Վերևում եղած բաների մասին՝ մտածեք», նոր մտածելակերպ, հաճախ մտածում ենք, որ լինելով կամ ասոցացվելով քրիստոսի հետ, և կարող եք իմ հունարենի դասն այստեղ օգտագործել: Այսպիսով, քրիստոսով լինելը ինչ-որ արտահայտություն չէ, որ աջ ու ձախ օգտագործենք, դա քրիստոսն է իմ մեջ, ինչը, ըստ Աստվածաշնչի, փառքի հույսն է. «Քրիստոսը ձեզանում՝ այն փառքի յոյսը», ինչպես նաև դուք՝ քրիստոսով: Ինչպես ասացի, սա հռետորաբանություն կթվա, եթե չօգտագործենք Հովհաննես 17-ը. մի խոսք էլ կա Հովհաննես 14-ում. մեկն էլ կա, կարծեմ, Հովհաննես 10-ում, որոնք կարծես նույն իմաստն ունեն: Եվ սա ինձ ստիպում է մտածել քրիստոսով լինելու գաղափարի մասին

Փաստորեն, այստեղ խոսվում է Քրիստոսի հետ ձեր կապի մասին: Այսպիսով, եթե մեկ բան ասելու լինեի, այսպես կոչված, եզրային հավատացյալներին, դուք շատ կարևոր բան եք բաց թողնում, եթե չեք հասկանում, որ այն միությունը, որ ունեք Քրիստոսի հետ, անձնական է, մի բան է, որ հետևանքներ ունի: Դա պարզապես արտահայտությունն է՝ «Ես Քրիստոսով եմ», այս օրհնության հետ հետևանքներ են գալիս: Եվ դրանցից մեկն այն է, ես սա վերջին անգամ կկրկնեմ, այն օգնում է մեզ մի փոքր հասկանալ, թե ինչու մարդկանց երկու խումբ կա Ամերիկայում՝ անգամ այսօր: Ունենք մարդիկ, ովքեր Քրիստոսի հետ միության մեջ են, ովքեր հասկանում են, որ իրենք Նրան են, Նրան են պատկանում: Եվ նրանց մտքերը, նրանք պահվածքը, նրանց առօրյա կյանքերը կառավարվում են Նրանով լինելով. և կան մարդիկ, ովքեր պարզապես ապրում են Ադամի շուրջ, ինչը աշխարհն է ու մարմինը: Եվ միակ միությունը, որ նրանք ունեն, անեծքի հետ է, այն ամենի հետ, ինչը դեռևս կապված է օրենքի հետ, և այդտեղ ազատությունն չկա: Հիմա ասացեք ինձ, սա մի բան է, ինչի մասին ամեն մեկն իր համար պետք է մտածի, բայց երբ հաջորդ անգամ երբ լսեք, որ որևէ մեկն օգտագործում է «Քրիստոսով» արտահայտությունը, մտածեք, որ այն շատ ավելի խորը իմաստ ունի, որի մասին պետք է մտածենք, հրաշալի, անհամեմատելի Քրիստոսի մասին, ում համար որպես մասնակիցներ ենք ընտրվել, Նրա բնության ստացողներն ենք, Նրա եկեղեցու ցանկությունն ենք, Նրա ընտրյալներն ենք, որ պետք է աճենք և համապատասխանենք այն պատկերին և նմանությանը, որ Նա ունի: Մտածեք այս մասին: Ահա թե ինչ է նշանակում «Քրիստոսով»: Եվ լինել Քրիստոսով ոչ միայն հնում, այլև լինել Քրիստոսով Գլենդելում կամ որտեղ որ գտնվում եք այսօր, ժամանակն է, որ սկսենք կիրառել այն, ինչ կարդում ենք, և թող այն ամենը, ինչ ուսումնասիրում ենք, ձևավորի մեր մտքերն ու գաղափարները Աստծո մասին, ինչպես նաև մեր դիրքային հարաբերությունը, որին երբեք չպետք է վերաբերվել որպես. «Oh, հա, գուցե կիրակի օրը մի ժամ ունենամ եկեղեցի գնալու համար. դա բավականին երկար ժամանակ է»: Թույլ տվեք ձեզ մի բան ասել: Եթե ձեր միությունը Քրիստոսի հետ է, ձեր շաբաթվա կարևոր մասը պետք է դառնա մի փոքր ավելին սովորելը մեր Տիրոջ և Փրկչի ցանկության մասին մի փոքր ավելին հասկանալը, որը նա ունի սիրելի երեխաների համար, ինչպես որ մենք մեզ դավանում ենք: Հուսով եմ՝ այս հաղորդագրությունը այն մարդկանց համար է, ովքեր մի փոքր պարզաբանման կարիք ունենին այն մասին, թե ինչ է նշանակում Քրիստոսի հետ միության մեջ լինել: Եվ այն մարդկանց համար, ովքեր շփոթված են այն ամենից, ինչ կատարվում է աշխարհում, կարիք չկա, կարիք չկա, որ հոգեբանության կամ մարդկանց ուսումնասիրության աստիճան ունենաք: Ձեզ պարզապես անհրաժեշտ է հասկանալ, թե այսօր ինչ ասացի: Դա ձեզ շատ բան կասի այն մասին, թե ինչու ենք հիմա այս վիճակում: Վերջին հարյուր տարիների ընթացքում, իսկ հիմա 2020 թվականն է, վերջին հարյուր տարիների ընթացքում կրթական զարգացումների հետ մեկտեղ, Չոն Դյուլիի առաջադեմ կրթության մեկ մեկտեղ, արդյունաբերական հեղափոխությունից մինչ այսօր ընկած հարյուր տարիների ընթացքում, դա տեսնում ենք "Pew Reports"-ում, ավելի ու ավելի քիչ թվով մարդիկ են սովորում, ուսումնասիրում և ցանկանում քրիստոնյա լինել:

Շատ կարծիքներ կան այն մասին, թե ինչ է քրիստոնեությունը: Շատ խմբերի կարող եք պատկանել, որոնք մարդկանց կողմից հորինված գաղափարներ ունեն, որոնք ներկայացվում են որպես «աստվածաբանական» կամ «հոգևոր»: Սակայն միայն մեկ

ճանապարհ կա գտնելու այն պատասխանները, որոնց մասին ես եմ խոսում: Այսօր դրանք բացատրեցի: Հուսով եմ, որ նույնիսկ այն մարդկանց համար, ովքեր քերականություն չեն սիրում և մտածում են. «Օհ, սա արդեն չափից դուրս է», հույս ունեմ, որ կմտածեք ասածներիս մասին, որովհետև հասկանալով, թե ինչ է նշանակում լինել Քրիստոսով, ինչը մեկ հարթության մեջ չէ, այլ բազմաշերտ է, սկսում ենք հասկանալ, թե որքանով է Մելիսա Սքոթը կամ ձեր անունն այդտեղ օգտագործեք արմատավորված Նրա մեջ, ի տարբերություն Նրա, թե որքանով է մխրճված Ադամի թագավորության մեջ: Եվ դա կոչվում է հոգևոր գույքագրում, որը լավ է մեզնից յուրաքանչյուրի համար, որպեսզի դիտարկենք և չհիասթափեցնենք Աստծո շնորհը: Դա նման է ձեր զարկերակը ստուգելուն, կարծես ասեք. « Դեռ հավատքի մե՞ջ եմ: Դեռ ճիշտ ուղղությամբ եմ գնում»: Ահա այդ զարկերակն եմ խնդրում ստուգել այսօր: Ես աղոթում եմ, որ որևէ նոր պատկերացում կամ միգուցե ինչ-որ հին գաղափարներ մի փոքր միաձուլվեն, և դուք ցանկանաք այս թեման մի փոքր ավել ուսումնասիրել: Սակայն այս պահի համար սա է իմ հաղորդագրությունը:

ՎԵՐՋԱԲԱՆ.

Դուք հետևում էիք ինձ՝ հոգևոր հովիվ Մելիսա Սքոթին, ուղիղ հեռարձակմամբ Գլենդեյլից, Կալիֆորնիայից՝ Հավատքի Կենտրոնից: Եթե ցանկանում եք մեզ հետ ծառայության հաճախել, կիրակի առավոտյան ժամը 11-ին, պարզապես զանգահարեք 1-800-338-3030 հեռախոսահամարով, որպեսզի ստանաք ձեր անցագիրը: Եթե հավելյալ ուսումնառություն եք ցանկանում, այցելեք մեր կայքը, հասցեն է՝ www.PastorMelissaScott.com: